



# Զահրաստ

## Տարեդարձ

Այսօր դիպուածաւ  
Երբ փողոցը կամ հանրակառքին մէջ  
Կամ երկինքին վրայ երկինքէն անդին  
Երեսունըհինգ մոմ տեսնէք վառուած  
Զահրաստը յիշեցէք

Ձեր բանը գործը ձգեցէք մէկ դի  
Պահ մը ձեր վիշտերն ու քէնը սոսցէք  
Դիտեցէք մոմերու պուրակն այդ բռնկած  
Ու մտածեցէք

Թէ օր մ'ալ հով մը պիտի փշէ խօլ  
Այս բոլոր մոմերը պիտի մարին  
Ու պիտի ցրուին անջրպետին մէջ  
Ուր ոչ մոմ կ'ապրի ոչ դուք ոչ Զահրաստ

Պահ մը խորհեցէք  
Ու յետոյ դարձեալ  
Դուք ձեր հոգերուն  
Ես իմ մոմերուս

19 Մայիս 1959